տառապանաց, և բաղում անգամ գրեաց առ նոսա միաբանութեամբ՝ թէ չէ հնար կալ մնալ նոցա յԵրուսաղէմ, զի միաբանք պատրաստեալ էին գտանել դիպող ժամանակ և մեկնիլ անտի՝ և գնալ յայլ տեղի, և ինձ ասէ անկարելի արդելուլ և ընդդէմ կալ նոցա, պատահեցաք այսպիսի դառն ժամանակի՝ զի հասին կալան զմեզ ազգի ազգի ճախորդութիւնք, նեղութիւնք, վիշտք, սաստկութիւն սովու հարկապահանջութիւնք՝ իբրեւ զհեղեղս ջուրց, և հասուցին զմեզ 'ի դրունս մահու, օրական պարէն միաբանաց բաղում նեղութեամբ հայթայթին։

Սակայն նոքա արարին պատասխանի թէ՝ պարտ է համբերել վշտաց և տանել նեղութեանց և չթողուլ լքանել զժառանգութիւն ազգին։ Յայսպիսի դառն դանկաստանաց Պետրոս Պատրիարքի եւ միաբանաց ստիպեալ խնդրեցին ազգայինք զՏումար ծախուց և արդեանց Ս. Աթոռոյն, և նոքա առաքեցին զայն։

Իսկ այլազգիք Երուսաղէմի յետ արձակելոյ զմիաբանսն 'ի տաճարէն Ս. Յարութեան եւ անցանելոյ աւուրց ինչ՝ ժողովեցին դարձեալ զուխտաւորս տարւոյն եւ զժողովուրդս քաղաքին երից ազգաց, բաց 'ի կանանց՝ ոդիք իբրեւ 2000, և 'ի 14 Փետրվարի յաւուր Քառասնօրեայ Գալստեան Տեառն 'ի Տաճարն, արդելին յեկեղեցին Սուրբ Յարութեան, որք և ասէին թէ սոքա են լրտեսք և բանադնաց առ հաւատակիցս իւրեանց Գաղղիացիս, այր աղագաւ որդիք մահու են դոքա և չեն արժանի արեւ տեսանելոյ. մահաբեր ձայն խուժանին լսելի լինէր ամենայն ուրեք՝ բարձին քրիստոնեայք 'ի կենաց, եւ իբրեւ ոչ գտանէին զոք 'ի հրապարակի՝ խումբ արարեալ դիմէին 'ի գաւիթ Ս. Յարութեան, և ձայնէին լուտանօք 'ի փոքր պատուհանէ 'ի ներքս, արձակէին հրազէնս, որ և պատահեալ գնտակի միում 'ի միաբանացն Հայոց մեռաւ անդէն։ Ի զուր էին աղաչանք և պաղատանք վանականաց վասն ազատութեան ժողովրդոց եւ անդորրութեան քաղաքին, զի թոթափեալ էին յամենայն ընչից և մերկացեալ 'ի գոյից, հեծէին ընդ լծով տոկոսաւոր պարտուց։

Զօրք մեծին Նաբոլիոնի տիրեցին Արեւ քաղաքին Եգիպտոսի և սահմանաց Նորին. և չգտեալ զոք ընդդիմակաց,